ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

ՀՏԴ՝ 930.2
DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

ԱՐՏԱՇԵՍ ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱԿԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՔՆՆԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Արթուր Տ. Մելիքյան
Իրա Հ. Չատինյան
Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան, Վանաձոր, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Աշխատանքում ուսումնասիրվել են Հռոմի հետ հայոց Արտաշես II արքայի (Ք. ա. 34, Ք.ա. 30-20 թթ.) հարաբերությունների վերաբերյալ աղբյուրագիտական և դրամագիտական տվյալները: *Մեթոդներ և նյութեր.* Կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Օգտագործվել են հունահռոմեական պատմագիրների երկերը, հայկական, հռոմեական և Հռոմի խնդրարկու արքաների դրամագիտական նյութերը: *Վերլուծություն.* Քննության են առնվել Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման վերաբերյալ Դ. Կասիոսի և Կ. Տակիտոսի տվյալները, պարզաբանվել է դրանց միտումնավոր բնույթը:Ուսումնասիրվել են նաև Արտաշես II-ի քաղկոսների պատկերագրական համակարգում արտաշեսյան դրամահատության ավանդույթներից շեղումները, դրանց հակաարևմտյան-հակահռոմեական խորհրդապաշտությունն ու քարոզչական նպատակները: *Արդյունքներ.* Երկրորդ գահակալության սկզբներին Արտաշես II-ը փորձել է Օկտավիանուսի հետ հաստատել բնականոն հարաբերություններ, ինչը ձախողվել է Մեծ Հայքի նկատմամբ ավելի առարկայական տիրապետություն հաստատելու Օկտավիանուսի հավակնությունների պատճառով: Քաղաքական մեկուսացումից խուսափելու համար Արտաշես II-ը Ք. ա. 20-ական թթ. կեսերին աստիճանաբար թեքվել է դեպի Պարթևստանը: Նրա թողարկած քաղկոսների վրա այդ գործընթացն արտահայտվել է արքայի դիմապատկերի աջադարձ (արևմտյան) դիրքից ձախ դարձած (արևելյան) դիրքին, դեմքի հարդարանքի անմորուս ձևից մորուքավորին և հունատառ խորագրից արամեատառ

խորագրին անցնելով: *Հեղինակների ներդրումը*: Աշխատանքի առաջին ենթահարցը հեղինակել է Ա. Մելիքյանը, երկրորդը՝ Ի. Չատինյանը:

Բանալի բառեր՝ *Արտաշես II, Օկտավիանուս Օգոստոս, Ատրպատական, քաղկոս, պատկերագրություն, դրամական տիպ, երես, դարձերես:*

Ինչպես հղել՝ Մելիքյան Ա., Չատինյան Ի. *Արտաշես Երկրորդի հակահռոմեական դիրքորոշումը աղբյուրագիտական և դրամագիտական տվյալների քննահամեմատական լույսի ներքո*//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2025: Հ. 1 (28): 35-48 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

THE ANTI-ROMAN STANCE OF ARTAXIAS II IN THE LIGHT OF SOURCE AND NUMISMATIC DATA CRITICAL ANALYSIS

Arthur T. Melikyan

Ira H. Chatinyan

Vanadzor State University after H. Tumanyan, RA

Abstract

Introduction: This study examines the source-based and numismatic data regarding the relations between Rome and the Armenian King Artaxias II (c. 34 BCE, 30-20 BCE). *Methods and Materials:* A historical-comparative research method has been employed. The works of Greco-Roman historians, along with numismatic materials from Armenian, Roman, and Roman client kings, were used. *Analysis:* The study focuses on the data of Dio Cassius and Tacitus regarding Artaxias II's anti-Roman stance, clarifying the intentional nature of their portrayal. It also examines the deviations from the traditional Artaxian coinage practices in Artaxias II's coinage iconography, exploring the anti-Western and anti-Roman symbolism and its propagandistic purposes. *Results:* At the beginning of his second reign, Artaxias II attempted to establish normal relations with Octavian, which failed due to Octavian's ambitions to assert more direct control over (Great) Armenia. In order to avoid political isolation, Artaxias II gradually leaned towards Parthia in the mid-20s BCE. This shift is reflected in the iconography of the coins he issued, where the king's portrait changes from a right-facing (western) position to a left-facing (eastern) one, with the facial features becoming more bearded and the inscription shifting from Greek letters to Aramaic script. *Author Contributions:* The first subtopic of the paper was authored by A. Melikyan, and the second subtheme was authored by I. Chatinyan.

Key words: *Artaxias II, Octavianus Augustus, Atorpatene, calchus, drachma, iconography, coin type, face, reverse portrait.*

Citation: Melikyan A., Chatinyan I. *"The Anti-Roman Stance of Artaxias II in the Light of Source-critical and Numismatic Data* //"Scientific Works" of the SHCAS of NAS, Gyumri, 2025: V. 1 (28): 35-48 pp., DOI: 10.52971/18294316-2025.28.1-35

ՆԱԽԱԲԱՆ. Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման պատճառներին հռոմեական հեղինակներ Պ. Տակիտոսի ու Դ. Կասիոսի պաշտոնական տեսանկյունից տրված հակիրճ բացատրությունները մասնագիտական գրականության մեջ ընդունվել են անվերապահորեն: Խնդրի վերաբերյալ արժեքավոր տեղեկույթ են պարունակում նաև

հայոց այդ արքայի հատած պղնձե դրամները: Դրանց պատկերագրական տվյալները էապես հակադրվում են հռոմեական պատմագրության տեղեկույթին: Այդ հանգամանքը պահանջում է քննաբար վերանայել Արտաշես II-ի հակահռոմեական քաղաքականության պատճառների մասին ընդունված պատկերացումները:

1. Արտաշես II-ը և Օկտավիանուս Օգոստոսը

Ք. ա. 34 թ. հռոմեական եռապետ Անտոնիուսի կողմից Արտավազդ II-ի (Ք. ա. 55-34 թթ.) ուխտազանց կալանավորումից հետո գահաժառանգ Արտաշես II-ը ինքնաթագադրվելով՝ ռազմական գործողություններ է ձեռնարկել հռոմեացիների դեմ, բայց պարտվելով ապաստանել է պարթևների Հրահատ IV արքայի (Ք. ա. 38-2 թթ.) մոտ [12, XLIV. 39.6]: Ք. ա. 31 թ. Ակցիումի ծովամարտում Անտոնիուսի պարտությունից հետո, Արտաշես II-ը վերատիրացավ նախնյաց գահին և ըստ ընդունված կարծիքի՝ մինչև իր դավադիր սպանությունը մնացել է Հռոմի թշնամին: Հռոմեական հեղինակները, իբրև թե խոսելով անաչառ դիրքից, դրա հիմնապատճառ համարել են Արտաշես II-ի հոր՝ Արտավազդ II-ի հանդեպ Անտոնիուսի ուխտազանց վարմունքը: Այսպես, Դիոն Կասիոսը հաղորդում է, որ Անտոնիուսի հետ վճռական բախման նախօրեին Գայուս Օկտավիանուսը, ի շարս նրա դեմ հարուցված պաշտոնական մեղադրանքների, նրան ամբաստանել է նաև այն բանի համար, որ նա. *«Հայ (Արտավազդին) խաբելով, ձերբակալելով ու շղթայելով, մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը»* [12, L.1.4]: Նույնն է հաղորդում նաև Կ. Տակիտոսը. «*Հայաստանը... մեր (հռոմեացիների-ծ.հ.) հանդեպ անհավատարիմ էր Անտոնիուսի անպատիվ արարքի պատճառով, (քանզի) հայոց արքա Արտավազդին առերևույթ բարեկամությամբ հրավիրել էր իր մոտ, այնուհետև կալանավորել և, վերջապես, մահապատժի ենթարկել: Սրա որդի Արտաքսիասը, թշնամացած մեզ հետ իր հոր մասին հիշողությամբ, պաշտպանեց իրեն և իր թագավորությունը Արշակունիների ուժով*» [31, II.3]:

Դիոնի և Տակիտոսի վերոնշյալ հաղորդումներին առանցքային նշանակություն է տրվել Ք. ա. 34-20 թթ. հայ-հռոմեական հարաբերությունների անհաշտելի ընթացքը բացատրելու գործում: Բայց, սովորաբար, անուշադրության է մատնվել այն փաստը, որ երկու հեղինակներն էլ հռոմեական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներ են և պատմական տեղեկույթը ներկայացրել են հռոմեական տեսանկյունից: Հատկանշական է, որ Տակիտոսը, թեպետ հայ-հռոմեական հարաբերությունների վատացման սկզբնապատճառ համարում է Անտոնիուսի չարագործությանը (*scelus Antonii*), այնուամենայնիվ, հայերի վերաբերմունքն էլ բնութագրում է «անհավատարմություն» (*opus infidia*) արտահայտությամբ:

Ըստ էության, հռոմեական երկու հեղինակներն էլ խոսում են Հռոմի հետ «բարեկամության» ուխտով կապված հանրության հավատի (*fides*) խախտման մասին: Բայց երկուսն էլ փորձում են շրջանցել այն փաստը, որ Անտոնիուսը պաշտոնական հռոմեական իշխանություն կրող եռապետ էր, ուստի նրա չարագործության պատասխանատուն դառնում էր Հռոմեական պետությունը: Թերևս սրա գիտակցումով է, որ նրանք դիմում են յուրօրինակ գրական աճպարարության. Տակիտոսը լռում է Անտոնիուսի պայմանախախտությունից բխող իրավական հետևանքների մասին և ընթերցողի մոտ անաչառ

պատմագրի տպավորություն ստեղծելու նպատակով «ըմբռնումով» է արտահայտվում Արտավազդի որդի Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման մասին: Բայց, լայն պլանում, նրա այդ «ըմբռնումը» ծառայեցվում է ոչ թե Արտաշես II-ի արդարացմանը, այլ Օկտավիանուսի հակառակորդ Անտոնիուսի նսեմացմանը:

Դիոն Կասիոսը նույնպես ընդգծում է Անտոնիուսի ուխտազանցության և հայոց մեջ «*հռոմեական ժողովրդի հեղինակության վարկաբեկման*» պատճառահետևանքային կապը: Բայց, Անտոնիուսի մեղքը սահուն կերպով տեղափոխելով «սրբազան օրենքի» տարածք և նրա նկատմամբ կայացնելով մահվան վճիռ, հեղինակը ձգտում է «մաքրագործել» Օկտավիանուսին՝ եռապետության գծով իր գործընկերոջ գործած մեղքից: Ավելին, նա փորձում է արդարացնել Օկտավիանուսի բացասական վերաբերմունքը Արտաշես II-ի նկատմամբ, հայտնելով, թե նա «*սպանել էր Հայաստանում թողնված հռոմեացիներին*» [13, LI, 16.2]: Մասնագիտական գրականության մեջ Դիոնի այդ եզակի վկայությունն ընդունվել է անվերապահորեն [3, էջ 627: 4, էջ 418: 5, էջ 65: 7, էջ 234: 17, p. 135]: Ըստ էության, տուրք է տրվել միապետի հերոսական էթոսի տրամաբանությանը և անտեսվել է Արտաշես II-ի օրոք հայ-հռոմեական հակասությունների խորքային պատճառների գոյության հնարավորությունը: Ավելին, որոշ ուսումնասիրողներ, Արտաշես II-ի այդ քայլը գնահատելով իբրև հոր սպանության դիմաց վրիժառու որդու զգացմունքային պատասխանը հռոմեացիներին [**5**, էջեր 65-66], ընդլայնել են «սպանվածների» էթնիկ և սոցիալական կազմը՝ «հռոմեացիներ, իտալիկներ, զինվորականներ, առևտրականներ» [4, էջ 418: 7, էջ 234]: Սակայն թե՛ Դիոնի վերոնշյալ վկայությունը, թե՛ դրանից ածանցված կարծիքներն իրենց պարունակած ժամանակագրական, փաստական ու տրամաբանական անհարթությունների պատճառով խորքային քննություն են պահանջում:

Դիոն Կասիոսի կողմից Արտաշես II-ին ուղղված վերոնշյալ մեղադրանքի իրավականությունը պարզելու համար կարևոր է, թե ում նկատի ունի հեղինակը «*Հայաստանում թողնված հռոմեացիներ*» արտահայտության տակ, և երբ է տեղի ունեցել նրանց սպանությունը: Նշված արտահայտությունից ինքնին հասկացվում է, որ խոսքը Անտոնիուսի հռոմեական բանակի՝ Հայաստանում կայազորային ծառայության թողնված զորակազմի մասին է, այլ ոչ թե առևտրականների կամ իտալիկների, որոնք չէին կարող Հայաստան «բերվել» կամ «Հայաստանում թողնվել»: Դիոնը չի նշում խնդրո առարկա իրադարձության ժամանակը: Բայց տրամաբանված է այն տեղադրել Արտավազդ II-ի սպանությունից (Ք. ա. 31 թ. հոկտեմբեր) և հայոց գահին Արտաշես II-ի վերահաստատվելուց (Ք.ա. 31 թ. ձմեռ) հետո՝ նախքան Անտոնիուսի և Կլեոպատրայի ինքնասպանությունն (Ք. ա. 30 թ. հուլիս) ընկած ժամանակահատվածում: Այստեղից իսկ հասկանալի է դառնում խնդրո առարկա իրադարձության ժամանակի վերաբերյալ Դիոնի լռության պատճառը: Քանի դեռ Անտոնիուսը ողջ էր, Հայաստանում թողնված նրա զորքի դեմ Արտաշես II-ի ցանկացած ռազմական գործողություն, որն անխուսափելիորեն հանգեցնելու էր հռոմեացիների մահերի, Օկտավիանուսի կողմից պետք է համարվեր իրավաչափ. Անտոնիուսի հակառակորդը չէր կարող դեմ գնալ Ք. ա. 32 թ. հնչեցված սեփական քարոզչությանը և հանիրավի համարել այն, ինչն ուղղված էր իր կողմից անօրինական ճանաչված երևույթի դեմ: Ըստ այդմ՝ Անտոնիուսի զորքի դեմ պատերազմում հռոմեացիների սպանությունը չէր կարող խաթարել Անտոնիուսի հակա-

ռակորդի՝ Գայուս Օկտավիանուսի հետ Արտաշես II-ի դրական հարաբերությունների հաստատմանը: Թերևս այդ համոզմունքով է, որ Արտաշես II-ն իր երկրորդ գահակալության սկզբներին հատած պղնձե դրամները թվագրել է ըստ պոմպեուսյան տոմարի [32, pp. 89-90], ինչը փաստում է հայ-հռոմեական «բարեկամությունը» վերականգնելու նրա պատրաստակամության մասին[1]: Համապատասխանաբար՝ անհեթեթ կլինի մտածել, թե Արտաշես II-ը հոր մահվան լուրն առել է նրա սպանությունից 10 ամիս անց և հռոմեացիների կոտորած է սարքել վրեժխնդրության իրական օբյեկտի՝ Անտոնիուսի վախճանից հետո, երբ արդեն Հռոմեական պետության միանձնյա տիրակալ էր դարձել իր նահատակ հոր դաշնակից Օկտավիանուսը:

Անվիճելի է, որ Արտաշես II-ի վերոնշյալ դրամի պատմական տեղեկույթն ավելի անմիջական ու վավերական է, քան խնդրո առարկա իրադարձություններից շուրջ 200 տարի հետո ապրած պատմագրի վկայությունը: Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ տեղում հեղինակը սոսկ Արտաշես II-ի նկատմամբ Օկտավիանուս Օգոստոսի բացասական վերաբերմունքն ու Մեծ Հայքի նկատմամբ Ք. ա. 20 թ. հռոմեական ագրեսիան արդարացնելու նպատակ է հետամտել: Ըստ այդմ էլ՝ նա, միտումնավոր կերպով չհստակեցնելով «հռոմեացիների սպանության» ժամանակը, Անտոնիուսի դեմ Արտաշես II-ի Ք. ա. 34 թ. կամ էլ Հայաստանում Անտոնիուսի թողած զորքի դեմ 31 թ. պատերազմի ինչ-ինչ իրողություններ կտրել է պատմական համատեքստից և ներկայացրել Օկտավիանուսի միանձնյա իշխանության սկզբներին: Թերևս, Դիոնի վկայության մտացածին բնույթի մասին է խոսում նաև այն փաստը, որ ո՛չ Վ. Պատերկուլուսը, ո՛չ Տակիտոսը, ո՛չ Ստրաբոնը, ո՛չ էլ հայ-հռոմեական հարաբերություններին քաջատեղյակ մի այլ աղբյուր Արտաշես II-ի նման վրիժառու գործողության մասին չեն խոսում:

Ցանկացած պայմանագիր դադարում է գործել, երբ այն խախտում է պայմանադիր կողմերից մեկը: Ք. ա. 34 թ. հայ-հռոմեական «բարեկամության» քակտումը կատարվել էր Հռոմի մեղքով: Հետևաբար, Արտաշես II-ը միանգամայն իրավասու էր օրինական հիմքով հռչակել Մեծ Հայքի լիակատար անկախությունը: Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, նրա երկրորդ գահակալության սկզբներին հատված քաղկոսների վրա պոմպեուսյան դարաշրջանի գործածությունը խոսում է այն մասին, որ նախնյաց գահին վերահաստատված Արտաշես II-ը սկզբնապես չի այրել Հռոմի հետ կամուրջները: Նա պատրաստակամ է եղել մնալ Օկտավիանուսի հետ դեռևս իր հոր՝ Արտավազդ II-ի օրոք ստեղծված քաղաքական համագործակցության դաշտում [5, էջեր 55-60]: Ամենայն հավանականությամբ, հայոց արքան դա պատկերացրել է «բարեկամության» (*amicitia*) Ք. ա. 66 թ. Արտաշատում սահմանված ձևաչափով (Հռոմի հեգեմոնիայի պահպանմամբ)՝ իրեն վերապահելով քաղաքակրթական կամընտրության իրավունքը: Մինչդեռ, դատելով Ք. ա. 30 թ. ի վեր Հռոմի արտաքին քաղաքական ռազմավարության փոփոխության և Ք. ա. 20 թ. հատված հռոմեական դրամների «*Armenia recepta*» (Հայաստանը վերանվաճ-

[1] 324 թ. նման խնդիր գոյացել էր Տրդատ III-ի և Հռոմեական կայսրությունում իր միանձնյա իշխանությունը հաստատած Կոստանդիանուս I-ի միջև՝ մոտ 309-312 թթ. Մաքսիմինուս Դայա կայսեր դեմ Տրդատի մղած պատերազմի պատճառով: Բայց հայտնի է, որ Կոստանդիանուսը Տրդատի հանդեպ *հռոմեացիների սպանության* մեղադրանք չի հարուցել:

ված) խորագրի տրամաբանությունից, Օկտավիանոսը հավակնել է վերականգնել հայ-հռոմեական հարաբերությունների Պոմպեուսի՝ Ք. ա. 64 թթ. սահմանած ձևաչափը [7, էջեր 126-127]: Սակայն նույն Ք. ա. 20 թ. այլ դրամների «*Armenia capta*» (Հայաստանը նվաճված) խորագիրը խոսում է այն մասին, որ Օկտավիանուսը հաշվի է առել Ք.ա. 34-31թթ. նախկին հայ-հռոմեական իրավահարաբերության խախտումը և ցանկացել է հասնել Հայաստանի նկատմամբ հռոմեական առարկայացված տիրապետությանը [28, 27.2]: Ինքնիշխան Մեծ Հայքի գոյությունը չի մտել հռոմեական նոր աշխարհակարգի նրա տեսլականի մեջ: Դա էր պատճառը, որ Օկտավիանուսը չընդունեց Արտաշես II-ի «ուղերձը» և նրան չճանաչեց որպես Մեծ Հայքի օրինական գահակալ: Ավելին, նա մերժեց իր եղբայրներ Տիգրանին ու Արտավազդին Հայաստան վերադարձնելու Արտաշես II-ի խընդրանքը [5, էջ 66], ինչը բացահայտ սպառնալիք էր պարունակում Արտաշես II-ի հանդեպ:

Հայ-հռոմեական հակասությունների մյուս խնդիրը վերաբերում էր Ատրպատականին: Ք. ա. 31/30 թ. Արտաշես II-ը ոչ միայն ռազմակալել էր Ք. ա. 33 թ. Անտոնիուսի դաշնակիցը դարձած մար Արտավազդի երկիրը, այլև գերել էր արքային [11, XL. 44.1–4]: Ճիշտ է, Դիոն Կասիոսը չի նշում Ք. ա. 30 թ. մար Արտավազդին հաղթող կողմին: Բայց նրա վկայությունը, որ հռոմեացիների համար «*Հայաստանը Մարաստանի հետ միասին կորսվեց*» [12, XLIX.44.4], հստակորեն ակնարկում է Արտաշես II-ի գործողությունների մասին: Ընդունված կարծիքի համաձայն՝ Արտաշես II-ը Մեծ Հայքն ազատագրել ու Ատրպատականը նվաճել է պարթևական զորքով կամ պարթևական զորքի օգնությամբ [16, p. 48: 3, էջ 627: Հմմտ. 17, p. 135]: Սակայն, Հրահատ IV-ը Ք. ա. 31 թ. մինչև 29 թ. կեսերը գահընկեց էր և ստիպված էր ապաստանել «պարթևներին հարևան երկրներում» [23, XLII. 5,6: 9, p. 65: 5, էջ 69]: Բնականաբար, նա չէր կարող Ք. ա. 31-29 թթ. որևէ օգնություն ցուցաբերել հայոց արքային[2]: Ըստ այդմ, նա չէր կարող նաև Արտաշես II-ի նվաճած Ատրպատականի նկատմամբ որևէ հավակնություն ունենալ, քանզի պարթև վեհապետի դեմ ապստամբած մար Արտավազդը դրանից առաջ կարողացել էր Անտոնիուսի տրամադրած զինուժի օգնությամբ պաշտպանել իր անկախությունը Հրահատ IV-ից [12, XLIX. 44.4]: Ավելի ուշ մար Արտավազդը, փախչելով գերությունից, ընդունելություն գտավ Օկտավիանուսի մոտ, որը նրան հաստատեց Փոքր Հայքի գահին (Ք. ա. 30-20 թթ.): Հռոմեական հովանավորության ներքո նրա հայտնվելը Օկտավիանուս Օգոստոսին Ատրպատականի նկատմամբ պահանջատիրության հիմք տվեց: Իսկ դա ուղղակիորեն դիպչում էր Արտաշես II-ի արմատական շահերին: Այնպես որ, Օկտավիանուսի հետ հարաբերությունները կարգավորելու Արտաշես II-ի ձգտումն ի սկզբանե դատապարտված էր ձախողման:

Հռոմի հետ հակասությունների սրումը Արտաշես II-ին սպառնում էր քաղաքական մեկուսացմամբ: Արևմուտքից ու հյուսիսից Մեծ Հայքը շրջապատված էր թշնամաբար տրամադրված հռոմեահպատակ երկրներով [7, էջ 235], իսկ Հրահատ IV-ից աջակցություն ակնկալելն առժամանակ իրատեսական չէր: Նման պայմաններում հռոմեական

[2] Հազիվ թե Տակիտոսը անտեղյակ է եղել Հրահատ IV-ի աստանդական վիճակին: Բայց լռության մատնելով դա և փոխարենը նշելով թե Արտաշեսը «*պաշտպանեց և իրեն և իր թագավորությունը Արշակունիների ուժով*», հեղինակը ցանկացել է ներշնչել ընթերցողին այն տպավորությունը, թե հայոց արքան ինքնուրույն գոյության անկարող և դատապարտված մեկն է:

սպառնալիքին դիմակայելու համար Արտաշես II-ին մնում էր մի բան՝ միջոցներ ձեռնարկել իր իշխանության ամրապնդման և երկրի զորեղացման ուղղությամբ: Արտաշես II-ի այդ գործունեության մասին աղբյուրները լռում են: Փոխարենը, նրա քաղաքական և քարոզչական միջոցառումներն և դեպի պարթևներ քաղաքական սահքն արտացոլվել է նրա պղնձե դրամների պատկերագրական համակարգում:

2.1 Արտաշես II-ի պղնձե դրամները

Մինչև 1980-ական թթ. կեսերը հայտնի չէին դրամներ, որոնք վստահությամբ կարելի էր վերագրել Արտաշես II-ին[3]: Առաջին երկու դրամական տիպերը, որոնց պատկանելն Արտաշես II-ին համընդհանուր ծանաչում է գտել, հայտնաբերվել են Արտաշատի 1985 թ. պեղումներից [1, էջեր 5-7: 33, p. 77]: 2000-2001 թթ. դրանք համալրվել են պղնձե դրամների ևս չորս տիպերով [33, p. 77: Հմմտ. 21, pp. 9-10. Pl. 3. № 37-48, Pl. 4, № 41-48], որոնք բոլորն էլ հատվել են Արտաշես II-ի երկրորդ գահակալության ընթացքում՝ Ք. ա. 30-20 թթ.: Նպատակահարմար է դրանք դասակարգել ըստ դարձերեսի պատկերագրության:

Ամաթաեղջյուր. (*նկ.* 1)

Դրամական այս տիպը երևան է եկել Արտաշատի 1985 թ. պեղումներից և, ըստ երևույթին, թողարկվել է Արտաշես II-ի երկրորդ գահակալության սկզբներին:

Դիմերես. Կարճ մորուքավոր արքայի աջ դարձած գլուխը՝ ութնաթև աստղով զարդարված եռատամ խույրով, որին համադրված ապարոշի ժապավենները հանգույցից ծանրորեն կախված են արքայի ծոծրակին [1, էջեր 5-7: 32, p. 89]:

Դարձերես. Ամաթաեղջյուր, որի միջին մասում ժապավեն է կապված: Ամաթաեղջյուրի ձախ և աջ կողմերում ուղղաձիգ գրությամբ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΞΕΡΞ[...] (արքա Արտաքսերք[...]) խորագիրն է: Դաշտի արտաքին աջ կողմում զետեղված են ΣΛ, իսկ արտաքին ձախ կողմում՝ ΧΡ տառակապակցությունները: Ռ. Վարդանյանը ΣΛ-ն կարդում է ϛΛ, իսկ ΧΡ-ն՝ ΧΒ, և եզրակացնում, որ առաջինը «պոմպեուսյան» դարաշրջանի 36 թիվն է, որը, համապատասխանում է Ք. ա. 31/30 թ., իսկ երկրորդը՝ դրամի անվանական արժեքը՝ 2 քաղկոս [32, p. 90]: Դրամների քաշը 3,84 գ. է, իսկ տրամագիծը՝ 17,3 մմ, ինչը համապատասխանում է վերոնշյալ մեկնաբանությանը:

Խաղողի ողկույզ. (*նկ.* 2)

Դրամների այս տիպը նույնպես հայտնաբերվել է Արտաշատի պեղումներից: Այն խորագիր չունի և Արտաշես II-ին է վերագրվել արքայական դիմապատկերի պատկերագրական և ոճական տվյալների հիման վրա [1, էջ 6]:

---

[3] Պ. Բեջուկյանը և այլք մեծ վերապահումով Արտաշես II-ին են վերագրել ΒΑϹΙΛΕΩϹ ΜΕΓΑΛ[ΟΥ] տիտղոսով և դարձերեսին Նիկեի պատկերով պղնձե դրամը [8, pp. 29, 70, № 136: 6, էջ 57. № 48]: Բայց այդ տիպի նորահայտ օրինակի վրա ΒΑϹΙΛΕΩϹ ΜΕΓΑΛ[ΟΥ] ΤΙΓΡΑΝΟ[Υ] խորագրի հստակ ընթերցումից հետո դրամական այդ տիպը հանվել է Արտաշես II-ի դրամների շարքից: Ֆ. Կովաչի համոզմամբ՝ Արտաշես II-ն իր առաջին գահակալությունը նշանավորել է դարձերեսին Նիկեի պատկերով և նրա աջ և ձախ կողմերում ուղղաձիգ գրությամբ ΒΑϹΙΛΕΩϹ ΒΑϹΙΛΕΩΝ / ΑΡΤΑΖΑ լեգենդով բրոնզե չորեքքաղկոսների թողարկմամբ [20, pp. 83-86, Pl. 5, № 4–5]: Սակայն դա քիչ հավանական է, քանի որ ավելի տրամաբանված է ΑΡΤΑΖΑ պռատ խորագիրը ΑΡΤΑ[ΥΑ]ΖΔΟΥ վերծանել, ինչպես որ Արտավազդ II-ի դրախմաների վրա է [6, էջ 55], քան համարել, թե դրամի փորագրիչներն են Z-ը շփոթել Ξ–ի (քսի) հետ:

Դիմերես. Կարճ մորուքավոր արքայի աջ դարձած պատկերն է՝ գլխին հնգատամ խույր, որին համակցված ապարոշի ժապավեններն ուղիղ իջնում են հանգույցից:

Դարձերես. Խաղողի ողկույզ:

Դրամների քաշը 1.75 գ. է, տրամագիծը՝ 12.1 մմ.:

Շուն. (*նկ. 3*)

Դիմերես. Արքայի աջ դարձած պատկերն է՝ գլխին հնգատամ խույր և ապարոշ, որի ժապավենները հանգույցից իջնում են ծոծրակին: Խույրի վրա որևէ զարդանախշ չի երևում: *Դարձերես.* Աջ դարձած շուն՝ բարակ իրանով, երկար վզով և պոչը վեր բարձրացրած: Շան պատկերի վերևում աջից ձախ գրությամբ արամեերեն MLK՝ «արքա» բառն է: Շան պատկերից ներքև արամեերեն կիսաշրջանաձև գրությամբ մեկ այլ գրություն կա, որը, ամենայն հավանականությամբ, ներկայացրել է արքայի անունը: Ցավոք, պահպանված օրինակների մաշվածության պատճառով այն մնում է չվերծանված [33, Pl. 5. I. № 1-16; 27, p. 165, № 44]: Դրամների քաշը 0,56-1.6 գ. է, տրամագիծը՝ 10-12,6 մմ [33, pp. 78-79]:

Արծիվ. (*նկ. 4*)

Դիմերես. Արքայի կիսադեմը՝ աջ դարձած, դեմքը մորուքավոր, գլխին հայկական բարձր, հնգատամ խույր: Ճակատային մասում այն ունի հովար: Խույրի ականջակալները իջեցված են: Ապարոշը համակցված է խույրին: Խույրի վրա որևէ զարդանախշ չի երևում: Խորագիրը զետեղված է արքայի գլխի դիմաց և հետևում:

Դարձերես. Արծիվ՝ ձախ դարձած: Խորագիր չի նշմարվում [27, p. 165, № 45]:

Դրամների այս տիպը կշռում է 0,8-1.43 գ., տրամագիծը՝9-13 մմ. է [33, p. 79]:

Մեղու. (*նկ. 5*)

Դիմերես. Արքայի կիսանդրին աջ դարձած, դեմքը մորուքով, բարձր և նեղ հայկական խույրով: Որոշ օրինակների վրա արքայի դեմքը դարձած է ձախ: Խույրը երեք և ավելի ատամներ ունի, որոնք որոշ օրինակների վրա կորացած են: Խույրի ականջակալներն իջեցված են, իսկ ճակատային մասում հովար հիշեցնող տարր կա, որի նշանակությունը պարզ չէ: Խույրի ստորին մասում նշմարելի է ապարոշը, որի ժապավենները հանգույցից կախված են ծոծրակին: Արքայի գլխի առջևում և հետևում կան խորագրեր:

Դարձերես. Մեղու, որի պատկերը զբաղեցնում է ողջ դարձերեսը [33, pp. 79-80, Pl. 5, III. № 1-17]: Այս տիպի դրամների քաշը 0,8-2,09 գ. է, տրամագիծը՝ 12,2-14,3 մմ [33, p. 80]:

Մարդու կիսադեմ. (*նկ. 6*)

Դիմերես. Արքայի կիսանդրին ձախ դարձած, դեմքը մորուքավոր, բարձր և նեղ հայկական հնգատամ խույրով: Խույրը, որի վրա զարդանախշ չի նշմարվում, ճակատային մասում ունի հովարաձև ինչ-որ տարր: Արքայի գլխի դիմաց արամեատառ MLK' խորագիրն է, իսկ գլխի հետևում հավանաբար գրված է եղել արքայի անունը:

Դարձերես. Աջ դարձած գլուխ՝ ապարոշով [27, p. 165, № 46]: Այս տիպի դրամների քաշը 1,09-4,55 գ. է, տրամագիծը՝ 9,10-18 մմ.:

2.2 Արտաշես II-ի հակահռոմեական դիրքորոշման պատկերագրական արտահայտությունները նրա պղնձե դրամների վրա

ա. Արքայի գլխի դիրքը. Արտաշեսյան դրամների վրա արքայի գլուխը, որպես կանոն, պատկերվել է դեմքով դեպի աջ: Այս հարցում Արտաշեսյանները շարունակում

էին հելլենիստական Եգիպտոսի, Մակեդոնիայի, Սելևկյան տերության և սրանց քաղաքական ու մշակութային ազդեցության ներքո գտնվող հելլենիստական փոքր երկրների՝ Կապադովկիայի, Պոնտոսի և այլոց դրամահատական ավանդույթը [34, cc. 107-108]: Պարթևական դրամահատության մեջ արքայի գլխի՝ այս կամ այն դիրքով պատկերումը քաղաքական և գաղափարական առումներով իմաստավորված էր [24, pp. 132-138]: Միհրդատ II-ի (Ք. ա. 123-90 թթ.) օրոք հաստատվեց դեպի ձախ ուղղված դեմքով դիմապատկերման սկզբունքը [29, № 11 ff], որին հետևեցին նաև Պարսքի [18, Lot 1249-1282] և Էլյումայիսի [19, Lot 5074-5080] արքաները: Արտաշես II-ի պղնձե դրամներից շան և արծվի պատկերներով տիպերում արքայի գլուխը դարձած է աջ: Մեղվի պատկերով թողարկումների մեծ մասում նույնպես գլուխը աջ է դարձած, սակայն կա նաև այնպիսի օրինակ, որի վրա արքայի գլուխը դարձած է դեպի ձախ [33, Pl. 5, III. № 17]: Մարդու կիսադեմով տիպում արքայի գլուխը միայն ձախ է դարձած [33, Pl. 6. IV. № 1-20]: Դեպի ձախ ուղղված դիմապատկերը, մեծ հավանականությամբ, քաղաքական ենթատեքստ ունի և ակնարկում է տվյալ արքայի արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխության մասին:

բ. *Դեմքի հարդարանքը.* Հելլենիստական դարաշրջանում հունա-մակեդոնական արքաները, չնչին բացառություններով, և Հռոմի ուշ հանրապետական առաջնորդներն ու կայսրերը մինչև Հադրիանուսը դրամների վրա պատկերվում էին անմորուս: Տիգրան Մեծն ու Արտավազդ II-ը հետևել են արևմտյան ավանդույթին: Մինչդեռ Պարսքի արքաներն իրենց դրամահատության սկզբից՝ Ք. ա. III դ. կեսերից, պատկերվել են մորուքով [18, Lot 1240 ff]: Պարթևստանում Միհրդատ I-ի գահակալության կեսերից [29, № 12 ff: 24, pp. 132-138. 227-235], իսկ Էլյումայիսում և Խարակենեում Ք. ա. I դ. առաջին կեսին դրամների վրա անմորուս դիմապատկերից անցում կատարվեց մորուքավոր դիմապատկերին [19, Lot 5072-5080]: Փաստորեն Արտաշես II-ը Ք. ա. I դ. Արտաշեսյան առաջին արքան է, որը արևմտյան ավանդույթից շրջվել է դեպի արևելյանը: Մորուքի առկայությունը կամ բացակայությունը հաճախ դիտարկվում է արևելք-արևմուտք մշակութային-գաղափարախոսական և քաղաքական հակադրության համատեքստում, բայց ոչ ուղղակիորեն, այլ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքին վերաբերող մեզ հասանելի տվյալների ամբողջությունը [33, p. 83]: Արտաշես II-ի օրոք հայ-հռոմեական քաղաքական հակադրությունը աննախադեպ սուր էր: Դա բավարար հիմք է տալիս նրա դեմքի հարդարանքը կապակցելու դրամների երեսներին արքայական դիմապատկերի արևմտյան ձևից դեպի արևելյան ձևը կատարված փոփոխության հետ և այն նույնպես համարելու հայոց այդ արքայի քաղաքական դիրքորոշման մեջ կատարված կտրուկ շրջադարձի արտահայտություն:

գ. *Խորագրության լեզուն.* Արտաշեսյան դրամահատության մեջ խորագրության լեզուն, սկսած Տիգրան I-ից, եղել է հունարենը: Արտաշես II-ը Ք. ա. 31/30 թ. թվագրված երկքաղկոսների վրա շարունակել է այդ ավանդույթը: Սակայն դարձերեսին շան, մեղվի և մարդկային կիսադեմի պատկերներով տիպերում փոխված է խորագրի լեզուն: Համեմատաբար լավ պահպանված օրինակների քննության արդյունքում Ռ. Վարդանյանը եզրակացնում է, որ դրանց խորագրերը գրված են «հայացված» արամեական այբուբենով, և վերծանում է այն *MLK' 'rthšs*, (արքա Արտաշես) [33, pp. 85-89]: Անկասկած, դրամների

վրա հունարեն գրություն թողնելու շուրջ մեկդարյա ավանդույթից հրաժարվելու համար արտառոց պատճառներ էին պետք: Արտաշես II-ի մասին տվյալները բավարար հիմք են տալիս այն կապելու արքայի եղբայրներին Հայաստան վերադարձնելու խնդրանքի մերժման հետ և եզրակացնելու, որ արամեական գրության գործածությունը եղել է հայոց այդ արքայի հակահռոմեական դիրքորոշման արտահայտություն:

դ. Դարձերեսի պատկերագրությունը. Նմանատիպ շրջադարձ նկատվում է նաև Արտաշես II-ի պղնձե դրամների դարձերեսի պատկերագրության մեջ: Նախորդած արտաշեսյան արքաների դրամահատության մեջ ամաթաեղջյուրն ու խաղողի ողկույզը քիչ հանդիպող պատկերներից են [21, № 52, 79; 83; 87; 91; 126]: Հազվադեպ են նաև կենդանիների պատկերները: Տիգրան II-ի պղնձե դրամների վրա հանդիպում են ձին և փիղը [21, № 54; 55; 58; 97; 148]: Արտավազդ II-ի դրամների վրա այդպիսի պատկերներ առայժմ հայտնի չեն: Արտաշես II-ը փաստորեն հայկական դրամական պատկերացանկ ներմուծեց միանգամից երեք կենդանական պատկերներ: Անտիկ դարաշրջանի դրամահատության մեջ շան պատկերը տարածված չէ:Ուստի դժվար է հասկանալ Արտաշես II-ի դրամների վրա նրա խորհրդապաշտությունը: Հնարավոր է, որ այն կապ ունի մանուկ Սանատրուկին պահպանած «սպիտակ շան» մասին վիպական զրույցի հետ [2, II, ԼԶ] և Արտաշես II-ի դրամի վրա դրոշմվել է որպես հռոմեական տոտեմ էգ գայլի հակոտնյա: Արծվի (գիշատիչ թռչունի) խորհրդապաշտությունը Արտաշեսյան Մեծ Հայքում վաղնջական ու ընտանի էր, և նրա պատկերի կիրառությունը դրամական պատկերագրության մեջ չենք կարող համարել արտառոց իրադարձություն: Անտիկ դրամահատության մեջ մեղվի պատկերն առավել գործածական է եղել Եփեսոսում և Մելիտենեյում [14, Lot 492-494: 15, Lot 332-334], որտեղ այն կապվում էր Արտեմիսի պաշտամունքի հետ: Հնարավոր է, որ այն Արտաշես II-ի դրամահատության պատկերացանկ է թափանցել Արտեմիսի և Անահիտի կրոնական համակցման արդյունքում: Սակայն, մի կողմից, դրանց ժամանակի և գեղարվեստական ոճի, մյուս կողմից՝ պարթևական դրամահատության մեջ մեղվի և արծվի պատկերների լայն կիրառության փաստի տեսանկյունից [29, № 12.24b; 27.19; 31.17; 42.3; 47.35] չի կարելի բացառել, որ դրանք ևս կապված են եղել Արտաշես II-ի քաղաքական շրջադարձի հետ:

Խնդրահարույց է ապարոշով կիսադեմ գլուխը: Որոշ օրինակներում, թվում է, այն անմորուս է, մյուսներում ակնհայտորեն մորուքավոր է: Տարբերություններ կան նաև մազերի սանրվածքի մեջ: Այս տիպի դրամների մաշվածության պատճառով նույնիսկ հարց է գոյանում՝ տղամարդո՞ւ, թե՞ կնոջ պատկեր է ներկայացված: Չի բացառվում, որ ի դեմս դարձերեսի անմորուս դիմապատկերի՝ կարող է ներկայացված լինել Մեծ Հայքի թագուհին: Հակառակ դեպքում՝ կիսադեմ պատկերի գլխին հստակ նշմարվող ապարոշը համարելով ներկայացված անձնավորության արքայական կարգավիճակի վկայություն՝ պետք է նրան նույնականացնել Արտաշես II-ին ենթակա ինչ-որ արքայի հետ: Այս տիպի դրամի որոշ օրինակների վրա դարձերեսի պատկերը գլխին մարական կիթարիս է կրում (նկ. 6) [Հմմտ. 30, pp. 723-737: 35, c. 73], ինչը պարզորոշ խոսում է նրա ատրպատականյան ծագման մասին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ներկայացվածը հենց Ատրպատականի վասալ արքան է, որը աննկատ է մնացել աղբյուրներին: Եթե մեր հետևությունը

ճիշտ է, ապա կստացվի, որ Արտաշես II-ն այս դրամական տիպով շարունակել է տակավին Ք. ա. II դ. հելլենիստական դրամահատության մեջ սկզբնավորված վեհապետ-վասալ արքա զուգադիր ներկայացման երևույթը, որը Ֆ. Միլարը հռոմեական իրողությունների հիման վրա անվանել է «երկմակարդակ միապետություն» [25, p. 159]: Պարթևական դրամահատության մեջ նմանօրինակ դրամներ հատվել են Միհրդատ I-ի (Ք.ա. 165-132 թթ.) օրոք [29, № 12.4; 12.5, 12.17; 12.18; 12.23; 12.24a], ինչը ժամանակով բավականին հեռու է Արտաշես II-ից՝ նրա դրամահատության վրա ազդեցություն թողնելու համար:Բայց հայտնի է, որ Իտուրեյական Քաղքիսի կառավարիչ Զենոդորոսը (Ք. ա. 32-24 թթ.) Ք. ա. 26 թ. հատած քաղկոսների վրա իր և Օգոստոս կայսեր պատկերների համադրությամբ «երկմակարդակ միապետություն» պատկերագրական սկզբունքը ներմուծել էր Հռոմից կախյալ արքաների քաղաքական մշակույթ [10, № 4774-4775]: Քաղաքական քծնանքի այդ դրսևորումը, արագորեն ընդօրինակվելով [10, № 584: 22, pp. 5, 79], արդեն իսկ Օգոստոսի օրոք դարձել էր խնդրարկու արքաների դրամահատության պատկերագրական կանոնը: Ցավոք, Արտաշես II-ի քաղկոսը թվագրված չէ, և անհնար է ճշտել, թե այն նախորդե՞լ է Զենոդորոսի դրամին, թե հաջորդել: Բայց, քանի որ նման քարոզչական նշանակությամբ դրամները սովորաբար հատվում էին խնդրարկու արքաների նշանակման հետ միաժամանակ, ուստի կարելի է դրանց առաջին ենթատիպի երևան գալը թվագրել Արտաշես II-ի կողմից Ատրպատականի նվաճման տարով՝ Ք. ա. 30 թ.: Դրամական այս տիպի դարձերեսի պատկերների քննությունը թույլ է տալիս զանազանել դրանց առնվազն երեք դիմապատկեր: Դրանից հետևում է, որ Ք. ա. 30-20 թթ. Ատրպատականում գահակալել են Արտաշես II-ին հպատակ առնվազն երեք արքաներ և, համապատասխանաբար, կատարվել է առնվազն երեք թողարկումներ, որոնց քարոզչական նպատակը եղել է հայ բնակչությանը Ատրպատականի նկատմամբ հայոց արքայի իշխանության փաստն ազդարարելը: Իսկ հռոմեական խնդրարկու արքաների «երկմակարդակ միապետության» թեմայով դրամների հետ համեմատության մեջ Արտաշես II-ի քաղկոսները դիտողին պետք է ներշնչեին այն միտքը, թե հայոց արքան ոչ միայն անկախ է Հռոմից, այլև իր քաղաքական կարգավիճակով հավասար է հռոմեական կայսրին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հռոմեական պատմագրությունը Արտաշես II – Օկտավիանուս Օգոստոս հակադրությանը տվել է միտումնավոր գնահատական՝ փորձելով ազատել Օկտավիանուսին Անտոնիուսի անպատիվ արարքի համար պատասխանատվությունից և, միաժամանակ, արդարացնել Մեծ Հայքի նկատմամբ Օկտավիանուս-Օգոստոսի մեծապետական նկրտումները: Արտավազդ II-ի ու Օկտավիանուսի միջև եղած քաղաքական հարաբերությունների ձևաչափը վերականգնելու առաջարկի և հարազատ եղբայրներին Հայաստան վերադարձնելու պահանջի մերժումը Արտաշես II-ը գնահատել է որպես իր սուվերեն իշխանության օրինականության մերժման և թշնամանքի նշան: Ըստ այդմ՝ նա հարկադրված է եղել մերձենալ Պարթևստանի հետ: Ք. ա. I դ. 20-ական թթ. նրա թողարկած պղնձե դրամների վրա այն արտացոլվել է արքայի դիմապատկերի աջադարձ (արևմտյան) դիրքից ձախ դարձած (արևելյան) դիրքին, դեմքի հարդարանքի անմորուս ձևից մորուքավորին և հունատառ խորագրից արամեատառ խորագրին անցնելով: Իսկ «երկմակարդակ միապետության» թեմայով քաղկոսների պատկերագրությունը, ազդա-

բարելով Արտաշեսի տիրապետությունը Ատրպատականի նկատմամբ, միևնույն ժամանակ Օգոստոս կայսրին ուղղված բացահայտ մարտահրավեր էր:

ՆԿԱՐՆԵՐ

1 2 3 4 5 6

Գրականություն

1. **Զարդարյան Մ**. «*Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից*»: Արտաշատ II: Հանրապետական գիտական նստաշրջան: 21 նոյեմբեր: Երևան: 1998: 5-7 էջեր:
2. **Խորենացի Մ.** «*Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*»: Տփղիս: Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի: 1913: 396 էջ:
3. *«Հայ ժողովրդի պատմություն: Հ. I»*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ: 1971: 991 էջ:
4. *«Հայոց պատմություն, հ. I: Գիրք երկրորդ»*: Երևան: «Զանգակ» հրատ.: 2024: 700+24 էջ:
5. **Մանասերյան Ռ.** «*Հայաստանն Արտավազդից մինչև Տրդատ Մեծ*»: Երևան: «Արեգ» հրատ.: 1997: 215 էջ:
6. **Մուշեղյան Խ.** «*Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ. թ. ա.V-մ. թ. XIV դդ.)*»: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: 351 էջ:
7. **Ստեփանյան Ա**. «*Պատմության Կերպափոխությունները Մեծ Հայքում*»: Գիրք Ա: Երևան: «Սարգիս Խաչենց-Փրինտինֆո»: 2012: 385 էջ:
8. **Bedoukian P.** "*Coinage of the Artaxiads of Armenia"* // Royal Numismatic Society. Special Publication. No. 10. London. Royal Numismatic Society. 1978. 81 p.
9. **Bivar A**. "*Iran under the Arsacids"* // Cambrige History of Iran. New York. Cambridge University Press, 2006. V 3/2. 21- 99 pp..

10. **Burnett A., Amandry M., Ripollès P. "***Roman Provincial Coinage*. V. I". London. British Museum Press, Paris. Bibliotèque Nacioinale. 1992. 727 p. + 7 Maps.
11. **Cassios D.** "*Dio's Roman History*". V. III. London, New York. W. Heinemann LTD, The Macmillan Co. Harvard University Press, 1914: 519 p.
12. **Cassios D.** "*Dio's Roman History*. V. V". London. Cambridge Mass. W. Heinemann LTD, Harvard University Press. 1955. 526 p.
13. **Cassios D.** "*Dio's Roman History*. V. VI". London, Cambridge Mass. W. Heinemann LTD, Harvard University Press, 1955, 492 p.
14. **Classical Numismatic Group, Inc.** "*Auction 37. A Mail Bid Sale*". 20 March,1996. file:///D:/Catalogs%20of%20Ancient%20Coins/CNG_37.pdf (դիտվել է 20.02.2025):
15. **Classical Numismatic Group, Inc.** "*Auction 88 An Internet & Mail Bid Sale*." Sept. 14, 2011// file:///D:/Catalogs%20of%20Ancient%20Coins/CNG%20MBS%2088%20Virtual%20Catalog.pdf (դիտվել է 20.02.2025):
16. **Dąbrowa E.** "*Parthian-Armenian Relations from the 2nd Century BCE to the Second Half of the 1st Century CE* // Electrum. V. 28". 2021. 41-57pp..
17. **Debevoise N.** "*Political History of Parthia*". Chicago. The University of Chicago Press. 1938. 303 p..
18. **Dr. Busso Peus Nachf.** "*Auction 320*". 3-4 November 1987// https://www.parthia.com/pdc_peus320.htm (դիտվել է 23.02.2025):
19. **Dr. Busso Peus Nachf**. "Auction 363". 26 April 2000 // https://www.parthia.com/pdc_peus363_3.htm#Elymais5 (դիտվել է 23.02.2025):
20. **Kovachs F.** "*Additions and Corrections to Armenian Coins and Their Values* // Armenian Numismatic Journal. Series 1. V. 30". 2004. 83-86pp..
21. **Kovachs F.** "*Armenian Coinage in the Classical Period*"// Classical Numismatic Studies. № 10. Lancaster/London. Classical Numismatic Group. Inc. 2016. xxv+83 p. + 34 Plates.
22. **Kropp A.** "*Images and Monuments of Near Eastern Dynasts, 100 BC-AD 100*". Oxford. Oxford University Press. 2013. 520 p.
23. **Ivstinvs**. *M. Ivniani Ivstini Epitoma Historiarvm Philippicarvum Pompei Trogi. Accedvnt Prologi in Pompeivm Trogum*. Stvtgardie. B.G. Tevbner. 1985. 375 p.
24. **Magub A.** "*Political and Religious Ideologies on Parthian Coins of the 2nd-1st Centuries BC*". // Thesis submitted for the degree of PhD. Department of Religions and Philosophies, School of History, Religions and Philosophies SOAS, University of London London, 2018, 349 p.// https://eprints.soas.ac.uk/30283/1/4573_Magub.pdf (դիտվել է 24.02.2025):
25. **Millar F.** "*Emperors, Kings and Subjects: The Politics of Two-level Sovereignt*" // Scripta Classica Israelica 15. 1996. 159-173pp..
26. **Nercessian Y.** "*Armenian Coins and Their Values*" // Armenian Numismatic Society. Special Publication. № 8. Los Angeles. 1995. 254 p. + 46 Plates.
27. **Nurpetlian J.** *Ancient Armenian Coins: The Artaxiad Dynasty (189 BC - AD 6)* // Beryutus Archaeological Studies. Vol. LI-LII. Beirut. 2008-2009. pp. 117-167.
28. **Res Gestae Divi Augusti** // The Achievments of the Divine Augustus with an introduction by P.A. Brunt and J. M. Moore, Oxford University Press, 7-nd Edition, Oxford. 1983. Oxford University Press. 90 p.
29. **Sellwood D.,** "An Introduction to the Coinage of Parthia, 2nd edit"., London, 1980. 322 p. + 10 Plates.
30. **Shahbazi Sh.** "*CLOTHING ii. In the Median and Achaemenid periods* // *Encyclopaedia Iranica*, V/7", 723-737pp..
31. **Tacitus P.** "*The Annals*". London. Poetry in Translation. 2017. 696 p.
32. **Vardanyan R.** "*A Dated Copper Coin of Artaxias II: Evidence of the Use of the Pompeyan Era in Artaxata*" // Armenian Numismatic Journal. V. XXVII. 2001. 89 p..
33. **Vardanyan R., Vardanyan K.** "*Newly-Found Groups of Artaxiad Copper Coins*" // Armenian Numismatic Journal. V. 34. № 4. 2008. 77-95pp..
34. **Варданян Р.** "*Аршакидский поворот*" //Вестник древней истории. 1992, № 4. 107-108.
35. **Фаррох К.** Персы: "*Армия великих царей*". Москва. Эксмо. 2009. 344 с.

R e f e r e n c e s

1. **Zardaryan M.** "Unique Coins from the Excavations of Artaxata, Artaxias II" [*Ezaki dramner Artashat'i peghumneris'*] // Coinage in Armenia: Republican Scientific Session. November 21. Teses of Reports. Yerevan: 1998. 5-7pp.. (in Armenian)
2. **Xorenaci M.** "History of Armenians" [*Movsis'i Xorenacvoy Patmut'yun Hayos'*]. Tp'ghis: Mnacakan Martirosyan publ. 1913. 396 p.. (in Armenian)
3. "History of Armenian Nation". V. I [*Hay jhoghovrdi patmut'yun*]. Yerevan: AS ArmSSR 1971. 603-634pp. (in Armenian).
4. "History of Armenia"**.** V. I. Book II. [*Hayo'c patmut'yun*]. Yerevan: "Zangak**"** publ. 2024. 700+24 p.. (in Armenian)
5. **Manaseryan R.** "Armenia from Artavazdes to Tiridat the Graeat" [*Hayastany Artavazdits' minch'ev Trdat Mets'*] // Yerevan. "Areg" LTD. 1997. 215 p.. (in Armenian)
6. **Mousheghyan Kh.** "Monetary Circulation in Armenia (V c. B.C. – A.D. XIV c.) " [*Dramakan shrjanar'ut'yuny' Hayastanum (M. t'. a. V-m.t'. XIV dd.*]. Yerevan: AS ArmSSR. 1983. 351 p. (in Armenian)
7. **Stepanyan A.** "Metamorphoses of History in Great Armenia. Book I. The Age of the Artaxiads" [*Patmut'yan kerpap'oxut'yunnery' Mec' Hayqum*]. Yerevan: **"**Sargis Khachentc -**"**Printinfo**"** publ., 2012. 385 p. (in Armenian)
8. - 33. (տե՛ս **գրականություն**)

34. **Vardanyan R.** Arsacid Reverse [*Arshakidskij povorot*] // Vestnik drevnei istorii, Moscow: 1992, № 4. 107-108pp.. (in Russian)
35. **Farrokh K.** "Sadows in the Desert" [*Persy: Armija velikihx carej*]. Moscow: "Эксмо". 2009. 344 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **27. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **29. 04 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Արթուր Տիգրանի ՄԵԼԻՔՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ՎՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, Վանաձոր, ՀՀ,
էլ. հասցե՝ arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Artur Tigran MELIKYAN: PhD in History, Associate professor
at the Chair of History of VSU, Vanadzor, RA,
e-mail: arthurmelikyan@rambler.ru // orcid.org/0009-0002-9922-2887

Իրա Հարությունի ՉԱՏԻՆՅԱՆ՝ պետհամալսարան,Վանաձոր, ՀՀ,
էլ. հասցե՝ irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083

Ira Harutyun CHATINYAN: State University, Vanadzor, RA,
e-mail: irachatintan@gmail.com // orcid.org/0009-0001-9624-9083